Կնք. 2007թ. նոյեմբերի 30

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀՀ ՔՆ ԾՁԲ N 061355

ք. Երևան Երկու հազար յոթ թվականի նոյեմբերի «30»

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս նախարար Վ. Վարդանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Բաժանորդ, մի կողմից, և «Դ-Տելեկոմ» ՓԲԸ-ն, ի դեմս Գլխավոր տնօրեն Ռ. Յիրիկյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Օպերատոր, մյուս կողմից «Կողմեր» կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Օպերատորը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով Բաժանորդին մատուցել էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն)՝ Օպերատորի կողմից ներկայացված հրապարակային օֆերտայի՝ Շարժական կապի ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններին համապատասխան, իսկ Բաժանորդը պարտավորվում է ընդունել Ծառայությունները և վճարել դրա համար՝ Օպերատորի կողմից սահմանված սակագնային պլանին համապատասխան: Օպերատորը մատուցում է սույն Պայմանագրով սահմանված Ծառայությունները համապատասխան իր կողմից սահմանված կանոնների:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Օպերատորը պարտավոր է.

2.1.1. առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում համաձայն Բաժանորդի կողմից ընտրված բաժանորդագրման պլանի պայմանների ապահովել զանգեր կատարելու և ստանալու, ինչպես նաև շարժական կապի այլ ծառայություններից օգտվելու հնարավորություն.

2.1.2. հասու դարձնել սույն Պայմանագրի շրջանակներում մատուցվող ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ տեղեկատվությունն ու կանոնակարգերը.

2.1.3. Բաժանորդի պահանջով տրամադրել վերծանումներ մատուցված ծառայությունների համար, ինչի համար Օպերատորը կարող է գանձել ծառայության վճար:

2.2 Օպերատորն իրավունք ունի.

2.2.1. Պայմանագրով կամ օրենքով սահմանված կարգով ինքնուրույն սահմանել և ժամանակ առ ժամանակ փոփոխել սպասարկման պլանները, Ծառայությունների ցանկը, դրանց մատուցման պայմանները և կանոնները.

2.2.2 կարճաժամկետ սահմանափակում, կիրառել Ծառայությունների ծավալների նկատմամբ՝ ելնելով տեխնիկական անհրաժեշտությունից.

2.2.3 Բաժանորդի կողմից Պայմանագրի պայմանների խախտման դեպքում միակողմանի կասեցնել Ծառայությունները (դրանց մասը) կամ դադարեցնել սույն Պայմանագիրն՝ առանց որևէ ծանուցման:

2.3.Բաժանորդը պարտավոր է.

2.3.1. հետևել կանոններին ու կանոնակարգերին, որոնք սահմանված են Օպերատորի և այլ GSM ցանցերի օպերատորների կողմից, որոնցում օգտագործվում է SIM քարտը.

2.3.2. Ծառայությունների համար վճարել Օպերատորի կողմից սահմանված սակագներով և կանոններին համապատասխան.

2.3.3. ապահովել Օպերատորի կողմից ներկայացված հաշիվների ժամանակին վճարումը.

2.3.4. SIM քարտերը պահպանել պատշաճ վիճակում.

2.3.5. զերծ մնալ օրենքին հակասող ցանկացած նպատակով Օպերատորի մատուցած ծառայություններն օգտագործելուց.

2.3.6. զերծ մնալ առանց Օպերատորի գրավոր համաձայնության SIM քարտը հեռահաղորդակցության ծառայություններ մատուցելու համար օգտագործելուց.

2.3.7. չօգտագործել SIM քարտերը որևէ անհամատեղելի սարքի հետ և որևէ եղանակով, որը կարող է ազդել հեռահաղորդակցության ցանցերի կամ սարքվորումների ապահով և անխափան աշխատանքի վրա.

2.3.8. անհապաղ տեղեկացնել Օպերատորին սույն Պայմանագրին վերաբերող վավերատարրերի փոփոխության մասին:

2.4. Բաժանորդն իրավունք ունի.
2.4.1. ստանալ ճշգրիտ տեղեկատվություն առաջարկվող Ծառայությունների, կիրառվող սակագների, մատուցված Ծառայությունների ծավալի, գանձված գումարների և Անձնական Հաշվի ընթացիկ մնացորդի մասին.
2.4.2 օրենքով կամ Օպերատորի կողմից սահմանված կանոններով նախատեսված դեպքերում հրաժարվել Օպերատորի կողմից շարժական ցանցի միջոցով տարածվող գովազդային հաղորդակցությունների ստացման հնարավորությունից, որն այլապես համարվում է տրված:

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Բաժանորդը իրեն մատուցված փաստացի Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Օպերատորի հաշվարկային կամ նրա կողմից մատնանշված այլ հաշվին փոխանցելու միջոցով:
3.2. Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա (հավելված 1):

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Սույն պայմանագրի կողմերը պատասխանատվություն են կրում սույն Պայմանագրով սահմանված իրենց պարտականությունների չկատարման համար:
4.2. Օպերատորը պատասխանատվություն չի կրում տեխնիկական խափանման հետևանքով ծառայությունների ընդհատման կամ այլ խանգարման համար բացառությամբ դեպքերի, երբ այն ողջամտորեն պետք է կանխատեսվեր և կանխվեր Օպերատորի կողմից: Այնուամենայնիվ, Օպերատորը պարտավոր է ձեռնարկել ողջամիտ միջոցներ կանոնավոր ծառայությունների շուտափույթ վերականգնման համար.
4.3. Սույն պայմանագրով Օպերատորի պատասխանատվությունը ցանկացած պարագայում որևէ մեկամսյա ժամանակահատվածում չի կարող գերազանցել SIM քարտի միջոցով տեղական զանգերի համար Բաժանորդի կողմից վճարվող միջին ամսեկան գումարը:
4.4. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում << օրենսդրությամբ սահմանված կարգով:
4.5. Բաժանորդը գնման պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակում:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Այլ պայմաններ

6.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից: Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած ժամանակ լուծել սույն պայմանագիրը՝ առնվազն 30 օր առաջ ծանուցելով մյուս կողմին, որի դեպքում կողմերի միջև կատարվում ֆինանսական պարտավորությունների փոխադարձ հաշվարկ:
6.2. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

6.3. Օպերատորը իրավունք ունի տեխնիկական հայեցողությամբ ժամանակ առ ժամանակ փոփոխել Շարժական կապի ծառայությունների մատուցման ընդհանուր պայմաններ՝ օֆերտայով սահմանված կարգով, որը պարտադիր կլինի Բաժանորդի համար:
6.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրություններով սահմանված կարգով:
6.5. Սույն պայմանագիրը կազմված է 3 թերթից, հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
6.6. Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԲԱԺԱՆՈՐԴ	ՕՊԵՐԱՏՈՐ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն	**«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ**
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն թիվ 3	ՀՀ, ք. Երևան, Արգիշտի 4/1
Հ/Հ 900011014124, Երևանի թիվ 1 գանձապետական բաժանմունք	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
	Հ/Հ 24701-1333330
ՀՎՀՀ 02565827	ՀՎՀՀ 01551651
Նախարար	Գլխավոր տնօրեն՝
..... Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆ	..... Ռ. ՅԻՐԻԿՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.

ՇԱՐԺԱԿԱՆ ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1 Պայմանագիր

1.1 Սույն Պայմանները սահմանում են Օպերատորի շարժական կապի, ինչպես նաեւ հարակից այլ ծառայությունների մատուցման ընդհանուր պայմանները:

1.2 Պայմանները հանդիսանում են հրապարակային օֆերտա (առաջարկ), որն ակցեպտավորման (ընդունման) պահից կազմում է Օպերատորի եւ Բաժանորդի միջեւ կնքված՝ կողմերի համար պարտադիր միանալու պայմանագիր (ստորեւ՝ «Պայմանագիր»): Ակցեպտ է համարվում օֆերտայի պայմաններն ընդունելու կամ կատարելու ուղղությամբ գործողություն ձեռնարկելը:

2 Սահմանումներ

2.1 Այնքանով, որքանով համատեքստից այլ բան չի բխում, Պայմանագրում օգտագործվող բառերն ու արտահայտություններն ունեն հետեւյալ նշանակությունը.

Անձնական Հաշիվ՝ Բիլինգային համակարգի կողմից վարվող անալիտիկ հաշիվ, որն օգտագործվում է Բաժանորդից ստացվող վճարումների եւ նրան մատուցվող ծառայությունների ծավալների հաշվառման համար:

Բաժանորդ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն ակցեպտավորել է սույն հրապարակային օֆերտան:

Բաժանորդային Սարքավորում՝ Օպերատորի շարժական ցանցի եւ SIM-քարտի հետ համատեղելի հեռախոսային կամ այլ սարքավորում, որի միջոցով Բաժանորդն օգտվում է Ծառայություններից:

Բիլինգային Համակարգ՝ հաշվարկների վարման ավտոմատացված համակարգ:

Գաղտնաբառ՝ տառերի եւ/կամ թվերի համակցություն, որն օգտագործվում է Բաժանորդի (լիազորված անձի) նույնականացման համար:

Հեռախոսի Համար՝ համար, որն օգտագործվում է շարժական ցանցում Բաժանորդին (կամ ծառայություններ ստանալու համար նրա կողմից լիազորված անձին) նույնականացնելու եւ սույն Պայմանագրի համաձայն ծառայություններ մատուցելու համար:

Ծառայություններ՝ Օպերատորի կողմից Պայմանագրի համաձայն մատուցվող շարժական կապի եւ հարակից այլ ծառայություններ: Օպերատորի կողմից նախատեսված դեպքերում՝ Ծառայությունները կարող են մատուցվել Օպերատորի կողմից նշված երրորդ անձանց կողմից: Բացի այդ, Օպերատորը կարող է հնարավորություն ընձեռնել երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայությունները Բաժանորդին հասանելի դարձնելու համար՝ նման երրորդ անձանց հետ հարաբերություններում հանդես գալով որպես Բաժանորդի Գործակալ, որը գործում է սեփական անունից, սակայն Բաժանորդի հաշվին եւ հանձնարարությամբ:

Օպերատոր՝ «Ռ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը պատշաճ կերպով հիմնադրված եւ լիցենզավորված է մատուցել շարժական կապի ծառայություններ Հայաստանի Հանրապետությունում: Օպերատորը հանդես է գալիս եւ մատուցում է ծառայություններ նաեւ «ՎիվաՍել», «Ալո» եւ իրեն պատկանող այլ ապրանքային նշանների ներքո:

SIM-քարտ՝ տեխնիկական հարմարանք, որին վերագրված է Հեռախոսային Համարը, եւ որը Բաժանորդի կողմից Բաժանորդային Սարքավորման հետ միասին օգտագործվում է Ծառայությունները ստանալու համար: Օպերատորի կողմից Բաժանորդին տրամադրված SIM-քարտը մնում է Օպերատորի սեփականությունը, եւ այն չի կարող Բաժանորդի կողմից օտարվել երրորդ անձանց: Ինքնին SIM-քարտն առեւտրային արժեք չունի:

3 Ծառայություններ

3.1 Ծառայությունների նկարագրությունը, որոնց նկատմամբ կիրառելի սակագները, պայմանները եւ կանոնները սահմանվում են Օպերատորի կողմից:

3.2 Բաժանորդի կողմից Ծառայությունների ստացման հնարավորությունը կարող է կախված լինել Բաժանորդային Սարքավորման տեխնիկական առանձնահատկություններից:

3.3 Ծառայությունները մատուցվում են Օպերատորի կողմից շահագործվող շարժական ցանցի առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում:

3.4 Ծառայություններից օգտվելու համար Բաժանորդը սեփական հայեցողությամբ եւ ծախսով ձեռք է բերում եւ օգտագործում է սերտիֆիկացված Բաժանորդային Սարքավորում:

3.5 Բաժանորդն ապահովում է SIM-քարտի պահպանությունը, եւ այն դեպքում, երբ Օպերատորը տեղեկացված չէ SIM-քարտի կորստյան կամ հափշտակման մասին, SIM-քարտի տիրապետողը համարվում է Բաժանորդի կողմից Ծառայություններ ստանալու համար լիազորված անձ: Բաժանորդը կրում է SIM-քարտի կորստյան, հափշտակման, վնասման (այդ թվում բնական մաշվածության) հետ կապված ռիսկերը:

3.6 Տեխնիկական անհրաժեշտության կամ օրենքով նախատեսված դեպքում, Օպերատորը կարող է փոփոխել Հեռախոսի Համարը՝ այդ մասին նախապես ծանուցելով Բաժանորդին:

3.7 Բաժանորդին մատուցված Ծառայությունների ծավալը որոշվում է Բիլինգային Համակարգի կողմից, այդ թվում՝ այլ ծառայություններ մատուցողների կողմից ներկայացված տվյալների հիման վրա:

3.8 Այլ բան սահմանված չլինելու դեպքում, Ծառայությունները մատուցվում են շուրջօրյա, առանց ընդհատումների: Ծառայությունների մատուցումը կարող է սահմանափակվել կամ ընդհատվել վերանորոգման եւ տեխնիկական սպասարկման աշխատանքների ժամանակ, որոնց մասին, հնարավորության դեպքում, Օպերատորը պետք է տեղեկացնի Բաժանորդին հրապարակային հայտարարություններ անելու միջոցով:

3.9 Մատուցվող ծառայությունների ծավալը կարող է սահմանափակվել Օպերատորի կողմից՝ Պայմանագրի եւ Օպերատորի կողմից սահմանված այլ կանոնների համաձայն:

3.10 Ծառայությունների որակը կարող է կախված լինել Օպերատորի հսկողությունից դուրս գտնվող հանգամանքներից, այդ թվում՝ Բաժանորդային Սարքավորման որակից, այլ օպերատորների ցանցերի աշխատանքից, ռադիոալիքների տարածմանը եւ ռադիոսարքավորումների նորմալ շահագործմանը

խոչընդոտող հանգամանքներից, տեղանքի առանձնահատկություններից եւ օդերեւութաբանական պայմաններից:

3.11 Օպերատորը պարտավոր չէ 3 (երեք) ամսից ավել պահպանել մատուցված Ծառայությունների մասին տեղեկատվությունը:

4 Օպերատորի իրավունքներն ու պարտավորությունները

4.1 Օպերատորը պարտավոր է՝

4.1.1 Պայմանագրի գործողության ընթացքում Ծառայություններից օգտվելու համար Բաժանորդին հատկացնել Հեռախոսի Համար եւ տրամադրել SIM-քարտ.

4.1.2 Բաժանորդին տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն Օպերատորի շարժական ցանցի ծածկույթի, Բաժանորդի կողմից ընտրված սպասարկման պլանով նախատեսված Ծառայությունների ցանկի, Ծառայությունների մատուցման պայմանների, մատուցված Ծառայությունների ծավալի եւ Անձնական Հաշվի մնացորդի մասին.

4.1.3 Բաժանորդի պահանջով տրամադրել մատուցված Ծառայությունների վերծանումները, ինչի համար Օպերատորը կարող է գանձել ծառայության վճար:

4.1.4 առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում ապահովել Ծառայություններից օգտվելու հնարավորություն:

4.2 Օպերատորն իրավունք ունի՝

4.2.1 Պայմանագրով կամ օրենքով սահմանված կարգով ինքնուրույն սահմանել եւ ժամանակ առ ժամանակ փոփոխել սպասարկման պլանները, Ծառայությունների ցանկը, դրանց մատուցման պայմանները եւ կանոնները.

4.2.2 կարճաժամկետ սահմանափակում կիրառել Ծառայությունների ծավալների նկատմամբ՝ ելնելով տեխնիկական անհրաժեշտությունից.

4.2.3 Բաժանորդի կողմից Պայմանագրի պահանջների խախտման դեպքում միակողմանի կասեցնել Ծառայությունները (դրանց մասը) կամ դադարեցնել սույն Պայմանագիրն՝ առանց որեւէ ծանուցման:

5 Բաժանորդի իրավունքներն ու պարտավորությունները

5.1 Բաժանորդը պարտավոր է՝

5.1.1 կատարել Պայմանագրի եւ Ծառայությունների մատուցման պայմանների եւ կանոնների պահանջները, հետեւել դրանց փոփոխություններին.

5.1.2 ժամանակին վճարել Ծառայությունների դիմաց, իսկ նախատեսված դեպքերում կատարել երաշխիքային դեպոզիտ կամ կանխավճար.

5.1.3 SIM-քարտը պահպանել պատշաճ եւ ապահով վիճակում եւ չթույլատրել SIM-քարտի օգտագործումը նման լիազորություն չունեցող անձանց կողմից.

5.1.4 չօգտագործել Ծառայությունները օրենքին հակասող նպատակներով.

5.1.5 առանց Օպերատորի գրավոր համաձայնության չօգտագործել Ծառայություններն էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցելու, գովազդ կամ զանգվածային հաղորդագրություններ տարածելու, քվեարկություններ, վիճակախաղեր կամ մրցույթների կազմակերպելու նպատակների համար.

5.1.6 չօգտագործել SIM-քարտը որեւէ անհամատեղելի սարքի հետ եւ որեւէ եղանակով, որը կարող է ազդել հեռահաղորդակցության ցանցերի կամ սարքավորումների ապահով եւ անխափան աշխատանքի վրա.

5.1.7 չօգտագործել SIM-քարտը եւ բաժանորդային սարքավորումը վայրերում, որտեղ դրանց օգտագործումն արգելված է (օրինակ՝ ավտոլցակայանում, օդանավում, մշակույթի օջախներում եւ այլն).

5.1.8 զերծ մնալ Ծառայությունների այնպիսի օգտագործումից, որի արդյունքում կարող են խախտվել Օպերատորի կամ այլ անձանց իրավունքները, կամ նրանց կարող է պատճառվել անհարմարություն.

5.1.9 անհապաղ տեղեկացնել Օպերատորին SIM-քարտի կորստյան կամ հափշտակման դեպքում՝ Օպերատորին ներկայացնելով SIM-քարտի նկատմամբ իրավունքները եւ Բաժանորդի (լիազորված անձի) ինքնությունը հաստատող բավարար ապացույցներ:

5.2 Բաժանորդն իրավունք ունի՝

5.2.1 ստանալ ճշգրիտ տեղեկատվություն առաջարկվող Ծառայությունների, կիրառվող սակագների, մատուցված Ծառայությունների ծավալի, գանձվող գումարների եւ Անձնական Հաշվի ընթացիկ մնացորդի մասին.

5.2.2 օրենքով կամ Օպերատորի կողմից սահմանված կանոններով նախատեսված դեպքերում հրաժարվել Օպերատորի կողմից շարժական ցանցի միջոցով տարածվող գովազդային հաղորդակցությունների ստացման հնարավորությունից, որն այլապես համարվում է տրված:

6 Հաշվարկներ

6.1 Ծառայությունների նկատմամբ կիրառվում են Բաժանորդի կողմից ընտրված սպասարկման պլանի համար Օպերատորի կողմից սահմանված սակագները, որոնք հրապարակվում են Օպերատորի վեբ-կայքում եւ ներկայացվում Օպերատորի սպասարկման գրասենյակներում:

6.2 Կախված սպասարկման պլանից, Ծառայությունների դիմաց վճարումները պետք է կատարվեն կանխավճարային կամ հետվճարային եղանակով, ինչպես նաեւ կարող է պահանջվել երաշխիքային դեպոզիտ կամ այլ ապահովություն:

6.3 Բաժանորդը պետք է անհապաղ գրավոր եւ/կամ Օպերատորի կողմից ընդունելի այլ եղանակով ծանուցի Օպերատորի համապատասխան ծառայություններին SIM-քարտի կորստյան կամ հափշտակության մասին, իսկ Օպերատորը պետք է շուտափույթ գործողություններ ձեռնարկի՝ Բաժանորդի պատշաճ ծանուցումը ստանալու պահից 24 (քսանչորս) ժամվա ընթացքում, SIM-քարտով մատուցվող Ծառայությունները կասեցնելու ուղղությամբ: Մինչեւ SIM-քարտով մատուցվող Ծառայությունների կասեցումը դրա տիրապետողին մատուցված Ծառայությունների համար հաշվարկված գումարները գանձվում են Բաժանորդից:

6.4 Օպերատորը կարող է գանձել վճար կասեցված Ծառայությունները վերականգնելու, անջատված SIM-քարտը վերամիացնելու, կորցրած/հափշտակված կամ փչացած SIM-քարտը վերակազմելու համար:

6.5 Տեխնիկական առանձնահատկություններից ելնելով, մատուցված որոշ Ծառայությունների համար գանձվող գումարները կարող են Անձնական Հաշվում արտացոլվել ուշացումով (օրինակ՝ ռոումինգ):

6.6 Կանխավճարային բաժանորդագրության դեպքում, եթե այլ բան սահմանված չէ Օպերատորի կողմից՝

6.6.1 Ծառայությունները մատուցվում են Անձնական Հաշվում առկա միջոցների եւ Օպերատորի կողմից սահմանված ժամկետի սահմաններում.

6.6.2 Օպերատորը սեփական հայեցողությամբ կարող է ապառիկ հիմունքներով Ծառայություններ մատուցել Բաժանորդին, եւ նման Ծառայություններից օգտվելու դեպքում Բաժանորդը պարտավոր է սահմանված ժամկետում մարել մատուցված Ծառայությունների համար հաշվարկված գումարները.

6.6.3 մատուցված Ծառայություններին համապատասխանող գումարները ուղղակիորեն նվազեցվում են Անձնական Հաշվի մնացորդից, եւ Օպերատորն ապահովում է հնարավորություն Անձնական Հաշվի մնացորդն էլեկտրոնային կամ այլ եղանակով ստուգելու համար.

6.6.4 կանխավճարված գումարը սահմանված ժամկետում, որի տեւողությունը ցանկացած դեպքում չի կարող գերազանցել 3 (երեք) տարին, ամբողջությամբ օգտագործված չլինելու դեպքում, Օպերատորը կարող է սեփական հայեցողությամբ եւ առանց ծանուցման զրոյացնել Անձնական Հաշվի մնացորդը.

6.6.5 Բաժանորդը պարտավոր է ժամանակ առ ժամանակ կատարել կանխավճար («լիցքավորել» SIM-քարտը).

6.6.6 Անձնական Հաշվի վրա միջոցների բացակայության դեպքում, Օպերատորը կարող է առանց ծանուցման արգելափակել ելքային հաղորդակցությունից եւ/կամ այլ Ծառայություններից օգտվելու հնարավորությունը.

6.6.7 սահմանված ժամկետում Անձնական Հաշվի մնացորդի լրացմանն ուղղված վճարում չստանալու դեպքում, Օպերատորն կարող է սեփական հայեցողությամբ, առանց որեւէ ծանուցման, լուծել Պայմանագիրը՝ դադարեցնելով SIM-քարտի սպասարկումը.

6.6.8 կանխավճարների ստացման գործընթացը հեշտացնելու նպատակով, Օպերատորը կարող է թողարկել կանխավճարային (լիցքավորման) քարտեր կամ թույլատրել վճարման այլ եղանակներ.

6.6.9 կանխավճարված գումարները ենթակա չեն վերադարձման, բացառությամբ այն դեպքերի, երբ Ծառայությունների մատուցումը հնարավոր չէ:

6.7 Հետվճարային (ապառիկ) բաժանորդագրության դեպքում, եթե այլ բան սահմանված չէ Օպերատորի կողմից՝

6.7.1 Օպերատորը պարտավոր է Բիլինգային համակարգի տվյալների հիման վրա պատրաստել ամսական ամփոփ հաշիվներ եւ փոխանցել դրանք իր հաճախորդներին սպասարկման գրասենյակներին մինչեւ հաջորդ ամսվա 5-րդ օրը.

6.7.2 հաշիվները կարող են դուրս գրվել և պահվել էլեկտրոնային տեսքով.

6.7.3 սպասարկման պլանով նախատեսված լինելու կամ Բաժանորդի կողմից պատվիրված լինելու դեպքում՝ ամփոփ հաշիվները փոստով առաքվում են Բաժանորդին.

6.7.4 Ցանկացած դեպքում, Բաժանորդը պարտավոր է ինքնուրույն ճշտել իր ամսական պարտքը եւ մարել այն մինչեւ հաջորդ ամսվա 15-րդ օրը.

6.7.5 Վճարման պարտավորությունը համարվում է կատարված այն պահին, երբ վճարված գումարը հանձնվում է Օպերատորի դրամարկղ կամ՝ մուտքագրվում Օպերատորի բանկային հաշվին: Բանկային վճարումները, ինչպես նաեւ Օպերատորի գործակալների միջոցով կատարված վճարումները, արտացոլվում են Օպերատորի Բիլինգային համակարգում մինչեւ վճարման կատարման օրվանը հաջորդող աշխատանքային օրվա ավարտը.

6.7.6 Բաժանորդը պարտավոր է ժամանակին կատարել վճարումները՝ անկախ վճարման եղանակից, առաքված ամսական հաշվի ստացման փաստից, եւ հաշվի վերաբերյալ առարկություններ ներկայացնելու հանգամանքից.

6.7.7 Վճարում կատարելիս՝ Բաժանորդը պարտավոր է վճարման փաստաթղթում ճշգրիտ նշել իր հեռախոսի համարը.

6.7.8 Բաժանորդի օգտին վճարում կատարող ցանկացած անձ համարվում է Բաժանորդի կողմից պատշաճ կերպով լիազորված եւ վերջինի անունից եւ համար գործող.

6.7.9 Օպերատորը կարող է սեփական հայեցողությամբ եւ, մասնավորապես, Բաժանորդի վարկային պատմության ոչ բավարար լինելու դեպքում, կիրառել օգտագործման սահմանափակումներ.

6.7.10 Բաժանորդը կարող է ուղղակի պարտադրման պայմանավորվածություններ ձեռք բերել Օպերատորի կողմից ընդունելի բանկի հետ, որով կլիազորի Օպերատորին գանձել ամսական հաշիվները Բաժանորդի բանկային հաշվից կամ վարկային քարտից եւ ստանալ տեղեկատվություն գանձված գումարների կամ գումարն ամբողջությամբ գանձելու անհնարինության մասին.

6.7.11 Վճարումները սահմանված ժամկետում չստանալու եւ/կամ նախատեսված սահմանափակումները գերազանցելու դեպքում Օպերատորն իրավունք ունի առանց որեւէ ծանուցման արգելափակել ելքային հաղորդակցությունից եւ/կամ այլ Ծառայություններից օգտվելու հնարավորությունը: Վճարումը սահմանված ժամկետից հետո 2 (երկու) շաբաթվա ընթացքում չստանալու դեպքում, Օպերատորն իրավունք ունի անջատել SIM քարտը: SIM քարտի կասեցումը կամ անջատումը հիմք չէ ամսական բաժանորդավճարը չհաշվարկելու համար.

6.7.12 Եթե Բաժանորդն օգտվում է մեկից ավելի Հեռախոսի Համարներից եւ սահմանված ժամկետում ամբողջությամբ չի վճարել որեւէ Հեռախոսի Համարի ամսական հաշիվը, ապա Օպերատորը կարող է կիրառել 6.7.11 կետում նշված միջոցները Բաժանորդի բոլոր SIM-քարտերի նկատմամբ.

6.7.13 Օպերատորն իրավունք ունի օգտագործել Բաժանորդի կողմից վճարված երաշխիքային դեպոզիտի գումարը՝ Բաժանորդի ժամկետանց պարտքերը մարելու համար.

6.7.14 Պայմանագիրը կհամարվի դադարեցված առանց որեւէ ծանուցման անհրաժեշտության, եթե Բաժանորդը 6 (վեց) ամսվա ընթացքում չդիմի Օպերատորին՝ իր անջատված SIM-քարտը վերամիացնելու համար, անկախ SIM-քարտի անջատման պատճառներից.

6.7.15 Օպերատորն իրավունք ունի սեփական հայեցողությամբ ԱՄՆ դոլարով ինդեքսավորել ժամկետանց վճարումների գումարները:

7 Բաժանորդի տվյալները

7.1 Բաժանորդը պարտավոր է Օպերատորի պահանջով եւ Օպերատորի կողմից ընդունելի եղանակով ներկայացնել հետեւյալ փաստաթղթերը՝

7.1.1 ֆիզիկական անձը՝ անձը հաստատող փաստաթուղթ.

7.1.2 իրավաբանական անձը՝ պետական գրանցման վկայականի պատճենը՝ հաստատված իրավաբանական անձի կնիքով, եւ իրավաբանական անձի անունից հանդես եկող անձի լիազորությունները եւ անձը հաստատող փաստաթղթերը.

7.1.3 անհատ ձեռնարկատերը՝ պետական գրանցման վկայականի պատճենը՝ հաստատված անձի ստորագրությամբ, եւ անձը հաստատող փաստաթուղթը:

7.2 Այլ բան սահմանված չլինելու դեպքում, Օպերատորին ներկայացվող անձը հաստատող փաստաթղթերը պետք է պարունակեն համապատասխան անձի (Բաժանորդի, նրա ներկայացուցչի) լուսանկարը:

7.3 Եթե փաստաթղթերի տրամադրումը պահանջվել է Օպերատորի կողմից, ապա դրանցով հավաստվող տվյալների փոփոխության դեպքում, Բաժանորդը պարտավոր է 1 (մեկ) ամսվա ընթացքում հայտնել Օպերատորին:

7.4 Օպերատորը պարտավոր չէ վերականգնել կորցրած/հափշտակված SIM-քարտը կամ SIM-քարտին վերագրված Հեռախոսի Համարը, եթե Օպերատորի մոտ Բաժանորդի անձնական տվյալների հաշվառված չլինելու պատճառով հնարավոր չէ հաստատել Բաժանորդի ինքնությունը:

8 Գաղտնիություն

8.1 Բաժանորդի մասին տվյալները, նրան մատուցված Ծառայությունների տեսակի, վայրի, ժամանակի եւ ծավալի մասին տեղեկությունները համարվում են գաղտնի եւ չեն բացահայտվում Օպերատորի կողմից, բացառությամբ այնպիսի դեպքերի, երբ դա պահանջվում է օրենքով կամ անհրաժեշտ է Օպերատորի իրավունքների պաշտպանության համար, այդ թվում՝ ժամկետանց պարտավորությունների գիջման դեպքում:

9 Պատասխանատվություն

9.1 Բաժանորդը սեփական ռիսկով է օգտվում Օպերատորի եւ երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայություններից: Օպերատորը չի կարող որոշել ծառայությունների համապատասխանությունը Բաժանորդի կարիքներին:

9.2 Յուրաքանչյուր Կողմ պատասխանատվություն է կրում Պայմանագրի կատարման ընթացքում մյուս Կողմին պատճառված իրական վնասների համար: Կողմերը հրաժարվում են եւ զերծ են պահում միմյանց անուղղակի վնասների եւ բաց թողնված օգուտների մատուցման պահանջներից:

9.3 Օպերատորը պատասխանատվություն չի կրում տեխնիկական խափանման հետեւանքով Ծառայությունների ընդհատման կամ այլ խանգարման համար, բացառությամբ դեպքերի, երբ դա տեղի է ունեցել Օպերատորի մեղքով եւ Բաժանորդը նախազգուշացված չի եղել ակնկալվող խափանման մասին:

9.4 Ցանկացած պարագայում, Օպերատորի պատասխանատվությունը չի կարող գերազանցել Բաժանորդի կողմից փաստացի վճարված միջին ամսական գումարի՝ Օպերատորի մեղքով Ծառայություններից օգտվելու անհնարինության ժամկետին համամասնորեն հաշվարկված գումարը:

10 Անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր)

10.1 Կողմերը պատասխանատվություն չեն կրում սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու կամ դրանց կատարումն ուշացնելու դեպքում, եթե դա հետեւանք է ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի, այլ բնական աղետի, պատերազմական գործողության, զինված հարձակման, պայթյունի, զանգվածային խռովության, գործադուլի, պետական մարմնի կողմից ընդունված ակտի, մայրուղային ենթակառուցվածքների խաթարման, էլեկտրասնուցման կրճատման կամ թերացած Կողմի վերահսկողությունից դուրս այլ իրադարձության:

11 Կիրառվող օրենսդրությունը

11.1 Պայմանագիրը կարգավորվում եւ մեկնաբանվում է համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության:

12 Պայմանագրի լեզուն

12.1 Պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով: Բաժանորդի հարմարության համար Պայմանագիրը, ինչպես նաեւ կիրառվող սակագները եւ կանոնները կարող են թարգմանվել եւ հրապարակվել նաեւ այլ լեզուներով, սակայն նման թարգմանությունների եւ հայերեն տարբերակի միջեւ որեւէ անհամապատասխանության դեպքում պետք է գերակայի հայերեն տարբերակը:

13 Բողոքների ներկայացման եւ վեճերի լուծման կարգը

13.1 Բաժանորդը պարտավոր է ստուգել եւ Օպերատորին գրավոր հայտնել ամսական հաշիվներում տեղ գտած անհամապատասխանությունների մասին Ծառայությունների մատուցման համապատասխան ամսվա ավարտից հետո 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում, եւ եթե սահմանված ժամկետում Բաժանորդը որեւէ անհամապատասխանության մասին չի հայտնել Օպերատորին, ապա հաշիվը համարվում է Բաժանորդի կողմից անվերապահորեն հաստատված եւ ընդունված, եւ Օպերատորը չի ընդունի այդ հաշվի ժամանակահատվածին վերաբերող որեւէ հետագա պահանջներ եւ առարկություններ:

13.2 Կողմերը պետք է ձգտեն լուծել ծագած վեճերը բարեացակամորեն՝ բանակցությունների եւ խորհրդակցությունների միջոցով: Փոխադարձ համաձայնության չգալու դեպքում, վեճերն ընդդատյա են Հայաստանի Հանրապետության իրավասու դատարաններին:

14 **Գործողության ժամկետը եւ Պայմանագրի պայմանների փոփոխումը**

14.1 Սույն օֆերտան 2007թ. հուլիսի 1-ից փոխարինում է նախկինում Օպերատորի կողմից կանխավճարային եւ հետվճարային կապի ծառայությունների մատուցման օֆերտաները եւ դրանց հիման վրա կնքված պայմանագրերի պայմանները համարվում են ամբողջովին փոխարինված սույն օֆերտայի պայմաններով: Սույն օֆերտայի կատարման օրվա դրությամբ գործող սպասարկման պլանները եւ Ծառայությունների մատուցման այլ պայմանները եւ կանոնները մնում են ուժի մեջ:

14.2 Այլ բան սահմանված չլինելու դեպքում, սույն Պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով:

14.3 Բաժանորդն իրավունք ունի միակողմանի լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին առնվազն 5 (հինգ) օր առաջ կամ Օպերատորի կողմից ընդունելի այլ ժամկետում գրավոր ծանուցելով Օպերատորին եւ կատարելով վերջնահաշվարկ փաստացի մատուցված Ծառայությունների համար:

14.4 Օպերատորն իրավունք ունի միակողմանի լուծել սույն Պայմանագիրը՝ Բաժանորդի կողմից Պայմանագրի պայմանների էական խախտման դեպքում, ինչպես նաեւ օրենքով, Պայմանագրով, սպասարկման պլանով կամ Օպերատորի կողմից սահմանված այլ կանոններով նախատեսված դեպքերում:

14.5 Պայմանագրի դադարեցման դեպքում Օպերատորն իրավունք ունի սեփական հայեցողությամբ օգտագործել SIM-քարտին վերագրված Հեռախոսահամարը, իսկ Բաժանորդը պարտավոր է անհապաղ մարել բոլոր պարտավորությունները Օպերատորի առջեւ ամբողջությամբ:

14.6 Օպերատորը կարող է, ժամանակ առ ժամանակ, սեփական հայեցողությամբ կատարել հրապարակային առաջարկ (օֆերտա) սույն Պայմանագրի պայմանները, այդ թվում կիրառվող սպասարկման պլանները, սակագները եւ կանոնները փոփոխելու մասին՝ այդ փոփոխություններն առնվազն 10 (տաս) օր առաջ Օպերատորի պաշտոնական վեբ-կայքում հրապարակելու եւ գրասենյակներում հայտարարելու միջոցով, ինչպես նաեւ այդ մասին Հայաստանի Հանրապետությունում լայն տարածում ունեցող առնվազն մեկ թերթում հրապարակային հայտարարություն տալելու միջոցով:

14.7 Պայմանագրի 14.6 կետի համաձայն առաջարկված փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում, Բաժանորդն իրավունք ունի միակողմանի կարգով դադարեցնել Պայմանագիրը՝ մինչեւ փոփոխությունների ուժի մեջ մտնելու համար նախատեսված ժամկետը այդ մասին գրավոր եւ/կամ Օպերատորի կողմից ընդունելի այլ եղանակով ծանուցելով Օպերատորին, իսկ եթե նշված ժամկետում այդպիսի ծանուցում ստացված չէ Օպերատորի կողմից եւ Բաժանորդը շարունակում է օգտվել Ծառայություններից, ապա փոփոխություններ կատարելու մասին Օպերատորի առաջարկը կհամարվի Բաժանորդի կողմից գործողությամբ ընդունված (ակցեպտավորված):

15 **Օպերատորի վավերատարրերը**

«Ղ-Տելեկոմ» փակ բաժնետիրական ընկերություն
Հայաստանի Հանրապետություն, ք.Երեւան 0015, Արգիշտի 4/1
ՀՎՀՀ 01551651, Հ/հ 247011333330 «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում
Վեբ-կայք՝ http://www.vivacell.am

ք. Երևան, 18 ապրիլի, 2017թ.
Yerevan, 18 April 2017
Ref.No MH/L170451/1.0/RY

Հարգելի գործընկեր,

Սույնով տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից «14» ապրիլի, 2017թ. գրանցված փոփոխության համաձայն՝ «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ ֆիրմային անվանումը փոփոխվել է:

Ընկերության նոր ֆիրմային անվանումն է՝

- հայերեն՝ **«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ**,
- ռուսերեն՝ **ЗАО "МТС Армения"**,
- անգլերեն՝ **MTS Armenia CJSC**:

Dear Partner,

Hereby please be informed that as per the amendment registered by the RA MOJ Agency for State Register of Legal Entities on April 14 , 2017, the name of K-Telecom CJSC has been changed.

The new name of the Company is as follows:

- in Armenian: **«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ;**
- in Russian: **ЗАО "МТС Армения";**
- in English: **MTS Armenia CJSC.**

Հարգանքով՝ / Best regards,

Ռալֆ Յիրիկյան / Ralph Yirikian
Գլխավոր տնօրեն / General Manager

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ
Արգիշտի փողոց 4/1, Երևան 0015, 22
Հեռ.՝ +37460771111, +37493568777
Ֆաքս՝ +37493298444
www.mts.am, info@mts.am